ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՅՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի Թեմական Պատգամաւորական ժողովի առթիվ Միածնաէջ Մայր Աթոռից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմեանին, թեմի հոգևոր ուխտապահ դասին, թեմական ու ծխական խորհուրդների անդամներին և կանադահայ հաւատաւոր Մեր բոլոր զաւակներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Կանադայի Հայոց Թեմը արդիւնաւորութեամբ շարունակում է տիրաւանդ առաքելութիւնը Կանադայում բնակեալ մեր ժողովրդի կեանքում: Հոգեւոր սպասաւորներիդ, թեմական ու ծխական կառոյցների անդամներիդ նուիրեալ ջանքերի ու յանձնառութիւնների շնորհիւ Քրիստոսասէր Մեր զաւակները, միաբանուած մեր եկեղեցիների հովանու ներքոյ, շարունակում են կենսունակ պահպանել իրենց ազգային ու հոգեւոր կեանքի անդաստանը՝ դրոշմուած հաւատի շնչով և զարդարուած աստուածահաճոյ իրագործումներով: Ամենքիդ բերելով Մեր գնահատանքը՝ յաջողութիւններ ենք մաղթում Թեմական Պատգամաւորական Ժողովի աշխատանքներին՝ ի նպաստ թեմի առաւել շինութեան ու պայծառութեան:

Վստահ ենք՝ քաջատեղեակ էք հայրենի մեր երկրում այն խնդիրներին ու դժուարութիւններին, որոնց շարունակում է բախուել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Հայաստանի իշխանութիւնների կողմից արդեն ամիսներ շարունակ իրականացուող ապօրինութիւններն ու ճնշումները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մեր եկեղեցականների հանդէպ էականօրէն խոչընդոտում են Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր, կրթական ու ազգային գործունէութիւնը: Սահմանադրութեան ու օրէնքների ակնյայտ խախտումներով տնական ժամանակ ազատութիւնից զրկուած են բարձրաստիճան հոգևորականներ, եկեղեցասիրութեամբ յայտնի ազգային բարերարը և նուիրեալ այլ հայորդիներ: Մասեացոտնի թեմի առաջնորդի պաշտօնից ազատուած և կարգալոյծ հռչակուած անձը դատարանի ու հարկադիր կատարումն ապահովող ծառայութեան ապօրինի որոշումներով շարունակում է աշխարհիկ կարգավիճակով զաւթուած պահել առաջնորդարանը և գործել որպէս թեմական առաջնորդ՝ տնօրինելով թեմի միջոցներին: Կարգալոյծ նախկին հոգեւորականներ իշխանութիւնների ակնյայտ հովանաւորչութեամբ զաւթուած են պահում վանքեր ու եկեղեցիներ և իրենց

հակականոնական, սրբապիղծ գործողութիւններով շարունակում են խոռվել մեր հաւատացեալների հոգևոր կեանքը: Դադարեցուած է Հայոց Եկեղեցու պատմութիւն առարկայի դասաւանդումը կրթական հաստատութիւններում, միակողմանիօրէն լուծարուած է Հայոց բանակի հոգեւոր առաջնորդութիւնը և Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայութիւնը: Հայոց բանակում եւ ազատազրկման վայրերում գնդերեց քահանաների և բանտերի փորձառու հոգևոր հովիւների հոգեխնամ գործունէութեան փոխարէն ծառայութիւնների մատուցման ապօրինի պայմանագրեր են կնքուում որոշ հոգևորականների հետ՝ շրջանցելով Մայր Աթոռը, որն, անտարակոյս, ունենալու է կարգապահական հետևանքներ: Շինծու գործերով արգելուած է ինչպէս Մեր, այնպէս և Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ հոգեւորականների՝ երկրից ելքի իրաւունքը, որի պատճառով չկարողացանք նաեւ մասնակցել Աւստրիայում նախատեսուած Եպիսկոպոսաց ժողովին, այցելութիւններ կատարել Սփիւռքի մեր համայնքներ եւ անգամ ներկայ լինել Վրաց Ուղղափառ Եկեղեցու Պետի յուղարկաւորութեան արարողութեանը: Հայաստանում տեղի ունենալիք առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ գործող իշխանական կուսակցութիւնը ՀՀ սահմանադրութեան և օրէնքների կոպիտ խախտումով իր նախընտրական ծրագրում ընդգրկել է այսպէս կոչուած «եկեղեցու բարենորոգութեան» դրոյթ, որի շրջանակներում նախատեսւում է պետական միջամտութեամբ վերատեսութեան ենթարկել եկեղեցական դարաւոր կարգն ու կանոնը, հրաժարական պարտադրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և Եկեղեցին, ըստ էութեան, ենթարկեցնել քաղաքական իշխանութեանը: Ցաւալի է, որ նաև որոշ հոգեւորականներ տեղի են տալիս խոտոր ընթացքների՝ նպաստելով հակաեկեղեցական գործողութիւններին կամ դառնալով դրանց մասնակից:

Այս պայմաններում, հակառակ յարուցուած դժուարութիւնների, մեր Սուրբ Եկեղեցին անշեղ ընթացքով շարունակում է իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ ծառայելով ազգային մեր իղձերի ու երազների իրականացմանը: Քաջալերական է, որ հաւատաւոր մեր ժողովուրդը հաստատակամ է իր եկեղեցասիրութեան մէջ և զօրակից մեր Սուրբ Եկեղեցուն՝ դիմակայելու բոլոր մարտահրաւէրներին ու փորձութիւններին: Այս առումով անհրաժեշտ է, որ աշխարհասփիւռ մեր թեմերը և եկեղեցական կառոյցները ևս գործնական ջանքներ ներդնեն՝ ի նպաստ մեր Սուրբ Եկեղեցու իրաւունքների պաշտպանութեան և նրա վարկի ու հեղինակութեան անսասանութեան: Վստահ ենք, որ ինչպէս պատմութեան ընթացքին, այսօր էլ Հայոց Եկեղեցին յաղթահարելու է այս իրավիճակը՝ թոյլ չտալով ոտնահարել կամ կամայական փոփոխութիւնների առարկայ դարձնել դարերով նուիրագործուած եկեղեցական մեր կանոնակարգն ու աւանդոյթները:

Այս դժուարին իրավիճակում Առաքելական մեր Սուրբ Եեկեղեցին ջանքեր է բերում՝ զօրացնելու համազգային միաբանութիւնը և մեր ժողովրդի կարողութիւնները նպատակաուղղելու առկայ խնդիրների լուծմանը:Սիրելիներ, մեր ազգային իղձերի ու նպատակների իրագործման, մեր նոր յաղթանակների ու ձեռքբերումների կերտման

ճանապարհը Հայրենիքի և Սփիւռքի զօրացումն է՝ աշխարհասփիւռ հայորդեաց նուիրեալ աշխատանքով, ազնիւ յանձնառութիւններով ու զոհողութիւններով:

Պատգամաւորական ժողովի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում Թեմական բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արգար եպս. Հովակիմեանին, հոգևոր դասին, թեմական ու ծխական խորհուրդների, տիկնանց ու երիտասարդաց միութիւնների, կրթական, մշակութային ու բարեսիրական հաստատութիւնների պատուարժան անդամներին՝ կանադաբնակ մեր ժողովրդին մատուցած բեղուն ու նուիրեալ ծառայութեան, ինչպէս նաև դժուարին այս ժամանակներում Սուրբ Էջմիածնի կողքին լինելու և Հայոց Եկեղեցու կանոնական իրաւունքը անխաթար պահպանելու նախանձախնդրութեան համար: Սիրելիներ, ի խորոց սրտի մաղթում ենք Ձեզ նորանոր յաջողութիւններ ու ձեռքբերումներ՝ ի նպաստ թեմի պայծառութեան և հաւատացեալ հայորդեաց բարօրութեան:

Թող Ամենակալ Տէրն Իր օրհնութեան ներքոյ հանապազ անսասան ու անխոով պահի Կանադայի Հայոց Թեմը և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, խաղաղութիւն պարգևի աշխարհին համայն ու բարօրութիւն ամենուր մեր ժողովրդին:

*Ողորմութիւն Աստուծոյ, շնորհք և սէր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան 22-ն Մայիսի
յամի Տեառն 2026 և ի թուին հայոց ՌՆՀԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 2378